

**«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ
(ՅԱՇՎԱՐԿԱԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Ուժի մեջ է 2015թ. փետրվարի 25 -ից

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, «ACBA ON-LINE» համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

«ACBA ON-LINE» ՀԱՍՎԱՐԳՈՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՈՒՄ	
48. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝	
- «ACBA ON-LINE» համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում ¹	3,000 ՀՀ դրամ/ամսական
- «ACBA ON-LINE» համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում՝ դիտարկման իրավունքով	1,500 ՀՀ դրամ/ամսական
- 2 հատ տոկենի (անվտանգության սարքի) կամ 2 հատ մոբայլ տոկենի (ծրագրային ապահովման) տրամադրում	անվճար
- Հավելյալ տոկենի (անվտանգության սարքի) կամ մոբայլ տոկենի (ծրագրային ապահովման) տրամադրում	յուրաքանչյուրը՝ 1,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
Սպասարկման միջնորդավճարի բացասական մնացորդը 9,000 ՀՀ դրամին հավասարվելու դեպքում՝ ծառայությունն ավտոմատ կերպով կասեցվում է:	
49. Ֆիզիկական անձանց համար՝	
- «ACBA ON-LINE» համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում	5 000 ՀՀ դրամ (միանվագ սպասարկման վճար)
- «ACBA ON-LINE» համակարգով հաճախորդի հաշիվների սպասարկում՝ դիտարկման իրավունքով	2 500 ՀՀ դրամ (միանվագ սպասարկման վճար)
- Գործարքների իրականացման իրավունքով «ACBA ON-LINE» համակարգից անցում դիտարկման իրավունքով «ACBA ON-LINE» համակարգի	անվճար
- Դիտարկման իրավունքով «ACBA ON-LINE» համակարգից անցում գործարքների իրականացման իրավունքով «ACBA ON-LINE» համակարգի	5,000 ՀՀ դրամ (միանվագ սպասարկման վճար)
1 հատ տոկենի (անվտանգության սարքի) տրամադրում	անվճար
Սպասարկման միջնորդավճարի բացասական մնացորդը 3,000 ՀՀ դրամին հավասարվելու դեպքում՝ ծառայությունն ավտոմատ կերպով կասեցվում է	
50. «ACBA ON-LINE» համակարգի միջոցով փոխանցումներ ՀՀ տարածքում (իրականացվում են Bank_Mail համակարգով)	
- ՀՀ դրամ	անվճար
- ԱՄՆ դոլար, եվրո	3,000 ՀՀ դրամ
51. «ACBA ON-LINE» համակարգի միջոցով հաշիվների վերաբացում	անվճար
52. «ACBA ON-LINE» համակարգով ավանդներ ներդնելու դեպքում ավանդի տոկոսադրույքը սահմանվում է 0.1% ավել տոկոսադրույքով:	
53. Տոկենի (անվտանգության սարքի) փոխարինում մոբայլ տոկենով (ծրագրային հավելվածով)	3,000 ՀՀ դրամ
54. Մոբայլ տոկենի (ծրագրային հավելվածի) փոխարինում այլ մոբայլ տոկենով (ծրագրային հավելվածով)	անվճար
55. Տոկենի (անվտանգության սարքի) վնասման դեպքում նոր տոկենի (անվտանգության սարքի) տրամադրում	անվճար
56. Տոկենի (անվտանգության սարքի) վնասման դեպքում փոխարինում մոբայլ տոկենով (ծրագրային հավելվածով)	3,000 ՀՀ դրամ
57. Տոկենի (անվտանգության սարքի) կորստի դեպքում լրացուցիչ տոկենի (անվտանգության սարքի) կամ մոբայլ տոկենի (ծրագրային ապահովման) տրամադրում	5,000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)

¹ POS-տերմինալների և առցանց վճարումների սպասարկման գծով Բանկի հետ համագործակցության պայմանագիր ունեցող առևտրի և սպասարկման կետերի՝ 1 500 ՀՀ դրամ ամսական: